# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՍՏԱՆԻ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 35 - 36 (16532) ՇԱԲԱԹ, 6 ՄԱՅԻՍԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

## ՄԵԿՆԱՐԿԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ




***Մայիսի 4-ին Վրաստանի խորհրդարանը՝ 80 «կողմ» եւ մեկ «դեմ» ձայներով, հաստատեց սահմանադրության վերանայման նախագծի համաժողովրդական քննարկման կազմակերպման հանձնաժողովի կազմը: Համաժողովրդական քննարկումը կսկսվի մայիսի 5-ին եւ կավարտվի հունիսին:***

Հանձնախմբի ստեղծումը եւ համաժողովրդական քննարկումն անհրաժեշտ ընթացակարգ է խորհրդարանում երկրի սահմանադրության մեջ ուղղումներ մտցնելու նախաձեռնումից հետո: Հանձնախմբի կազմում կլինի ինը մարդ:

Հիշեցնենք, որ Վրաստանի գլխավոր օրենքում ուղղումների նախագիծը մշակել է Պետական սահմանադրական հանձնաժողովը, որն աշխատել է 2016 թվականի դեկտեմբերից մինչեւ 2017 թվականի ապրիլի վերջը: Հանձնաժողովում քվեարկության պահին բոյկոտ են հայտարարել բոլոր յոթ ընդդիմադիր կուսակցությունները, իսկ ոչ կառավարական կազմակերպությունները եւ փորձագետների մի մասը դեմ են քվեարկել: Դրանից հետո, նախագիծը ներկայացվել է խորհրդարան:

Ընդդիմությունը եւ ոչ կառավարական կազմակերպությունները, որոնք մասնակցում էին սահմանադրական հանձնաժողովի աշխատանքին, ինչպես նաեւ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին դեմ են ուղղակի նախագահական ընտրությունների վերացմանը, բարձր ընտրական արգելքին, ընտրական դաշինքների ստեղծման արգելքին եւ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով մանդատների բաշխման մեթոդին:

(Խորագրի շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 102

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԵԾ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԷՐ»



Ախալցիխեում, Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարանում, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ուսանողների հետ հանդիպմանը, պատասխանելով այն հարցին՝ ինչո՞ւ Վրաստանը ցավակցություն չի հայտնել հայ ժողովրդին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ, ասաց.

- Մենք միշտ նշել ենք, որ տեղի ունեցածը մարդկային մեծ ողբերգություն էր: Եվ մեր հայ գործընկերները շատ լավ գիտեն, որ մենք միշտ ասել ենք այդ մասին: Մարդկային ողբերգություն, որը տեղի ունեցավ այն ժամանակ Օսմանյան կայսրությունում,- ասաց Վրաստանի նախագահը:

Հիշեցնենք, որ մեր թերթը անցյալ համարում արդեն տեղեկացրել էր ընթերցողին՝ «Սահմանադրությունը բոլորին» նախագահական ծրագիր-քարոզարշավի հետ բնակչությանը ծանոթացնելու նպատակով, Վրաստանի նախագահը ապրիլի 28-ին այցելել էր Փոկա, Վարձիա եւ շաբաթ օրը՝ ապրիլի 29-ին՝ Ախալցիխե:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՆ ԷՐ

***Մայիսի 5-ին պաշտոնական այցով Թբիլիսի ժամանեց եվրամիության հարեւանության եւ ընդլայնման քաղաքականության հարցերով եվրակոմիսար Յոհաննես Հանը:***



Նույն օրը տեղի ունեցավ եվրակոմիսարի ու Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հանդիպումը, որի ընթացքում կողմերը քննարկեցին Վրաստան-եվրամիություն համագործակցության առաջնահերթություններն ու Ասոցիացման պայմանագրի շրջանակներում երկրում նախատեսված բարեփոխումների իրականացման ընթացքը:

Հանդիպմանն ընդգծվեց եվրաինտեգրման գործընթացում Վրաստանի ակնհայտ առաջընթացը, ինչի վկայությունը Վրաստանի քաղաքացիների համար անայցեգրային պայմանակարգի հաստատումն էր:

Հանդիպման ավարտից հետո, տեղի ունեցավ համագործակցության մասին պայմանագրերի ստորագրման արարողությունը: Մասնավորապես, եվրոպական եւ եվրատլանտյան կառույց-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՏԱՐԵԴԱՐՁ

## ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

***Ապրիլի 30-ին Վրաստանը նշեց երկրի զինված ուժերի կազմավորման 26-ամյակը:***




Հոբելյանին նվիրված միջոցառմանը ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանի կառավարության անդամներ ու խորհրդարանի պատգամավորներ, երկրի հասարակական կազմակերպությունների, հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

Հիշեցնենք, որ Վրաստանի զինված ուժերը կազմավորվեցին 1990 թվականին, երկրի Գերագույն խորհրդի որոշմամբ: 1991 թվականի ապրիլի 24-ին անցկացվեց զինված ուժերում առաջին զորակոչը: Այսօրվա դրությամբ, Վրաստանի զինված ուժերում ծառայում է 37 հազար մարդ: Զինված ուժերի անմիջական ղեկավարը գլխավոր շտաբն է, որն իր հերթին գտնվում է պաշտպանության նախարարի ենթակայության տակ: Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը Վրաստանի նախագահն է:

Այսօր Վրաստանի զինված ուժերում հաշվվում է հետեւակային 5 բրիգադ, զենիթահրետանային դիվիզիա, օդային ուժեր, ուղղաթիռային առանձին էսկադրիլիա, ազգային գվարդիա, հատուկ գործողությունների ուժեր, հետախուզական վաշտ եւ այլ զորամիավորումներ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՄԱԿ-ՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ




***Տեղեկատվական շրջայցի շրջանակներում, մայիսի 2-ին, երկօրյա այցով, Թբիլիսիում էին գտնվում ՄԱԿ-ում հավատարմագրված տարբեր երկրների մշտական ներկայացուցիչները: Նշենք, որ շրջայցի վերաբերյալ պայմանավորվածության ձեռքբերման ժամանակ ենթադրվում էր, որ պատվիրակությունը պետք է գլխավորեր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, ծնունդով Ախալցիխեի շրջանի Ծղալթբիլա գյուղից Մովսես Աբեղյանը: Թեպետ, պաշտոնական այլ առաքելություն կատարելու պատճառով, վերջինս Թբիլիսի ժամանել չկարողացավ:***

Այցի շրջանակներում, ՄԱԿ-ում հավատարմագրված մշտական ներկայացուցիչները հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու, ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեի, պաշտոնական այլ անձանց հետ:

Հանդիպումներում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչներին մանրամասն տեղեկատվություն փոխանցվեց երկրում ընթացիկ գործընթացների, Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակի, տնտեսական եւ սոցիալական իրավիճակի բարելավմանն ուղղված կառավարության չորս կետից կազմված ծրագրի իրականացման, տարբեր ոլորտներում բարեփոխումների ընթացքի մասին:

Հանդիպմանը վրացական կողմը ներկայացրեց նաեւ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից պետության կողմից իրականացված քայլերը:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

## ՆՇՎԵՑ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌՈՐԴԴԱՐՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

***Ապրիլի 29-ին, վրացամերիկյան դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյա տարեդարձի առթիվ, Թբիլիսիում անցկացվեց քաղաքական խորհրդաժողով:***



Խորհրդաժողովին ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գի-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԸ ՀԻՄՆՎԱԾ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

### ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ 2020 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ

*Գործնականում Վրաստանի սահմանադրության բոլոր հոդվածները վերանայված են, եւ ներկայացված փոփոխությունների 80-85 տոկոսը հիմնված է փորձագետների, ոչ կառավարական հատվածի եւ սահմանադրական մարմինների առաջարկությունների վրա:*



Այդ մասին հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ, պետական սահմանադրական հանձնաժողովի նախագահ Իրակլի Կոբախիձեն:

- Սահմանադրական հանձնաժողովը մեծ աշխատանք կատարեց: Եթե գործող սահմանադրությունը համեմատենք ներկայացված նոր խմբագրության հետ, ապա գործնականում բոլոր հոդվածները վերանայվել են, եւ փոփոխությունների 80-85 տոկոսը հիմնված է փորձագետների ոչ կառավարական կազմակերպությունների ու սահմանադրական տարբեր մարմինների առաջարկությունների վրա,- հայտարարեց Կոբախիձեն եւ հավելեց,- վերջին հաշվով, փոփոխությունները կգործեն նրանից հետո, երբ կանցկացվի նորընտրյալ նախագահի երդմնակալության արարողությունը, իսկ համամասնական ընտրակարգով խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն 2020 թվականից հետո:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ

*Մայիսի 2-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Հավլաբարի նախագահական նստավայրում, հանդիպում ունեցավ ընդդիմադիր կուսակցությունների եւ ոչ կառավարական կազմակերպությունների հետ:*

Հանդիպմանը, «Պաշտպանի'ր սահմանադրությունը» քարոզարշավի շրջանակներում, տեղի ունեցավ մտքերի փոխանակություն պետական սահմանադրական հանձնաժողովի կողմից մշակած սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ:

Հանդիպմանը Գիորգի Մարգվելաշվիլին ողջունեց սահմանադրական բարեփոխումների հարցում քաղաքական կուսակցությունների ակտիվ մասնակցությունը եւ կոչ արեց առավել ակտիվացնել սահմանադրական փոփոխությունների քննարկման գործում հասարակայնության ներգրավումը: Ընդ որում, ինչպես հայտարարեց նախագահը, ներկա փուլում ինքը մտադիր չէ ներգրավվել «Պաշտպանի'ր սահմանադրությունը» քարոզարշավին, թեպետ խոստացավ պաշտպանել բոլոր ձեւաչափերը, որոնց ընթացքում կիրականացվի երկրի հիմնական օրենքի փոփոխությունների քննարկումը:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

# ՆՇՎԵՑ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌՈՐԴԴԱՐՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որգի Կվիրիկաշվիլին, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների, դիվանագիտական կորպուսի ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հիշեցնենք, որ Վրաստանն ու ԱՄՆ-ը դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին 1992 թվականի ապրիլի 23-ին: 2009 թվականին երկու երկրները ստորագրեցին ռազմավարական գործընկերության խարտիան, որը նախատեսում է գործընկերային կապերի եւ համագործակցության ընդլայնում պաշտպանության եւ անվտանգության, էկոնոմիկայի եւ էներգետիկայի, ժողովրդավարական բարեփոխումների, դիվանագիտության եւ մշակույթի ոլորտներում:

## ՎՐԱՍՏԱՆԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՉ՝ ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԻՆ

*Ամերիկայի եւ Վրաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-րդ տարեդարձի առթիվ, ԱՄՆ ներկայացուցիչների պալատի մոտ 30 անդամ Վրաստանին աջակցության ուղերձով դիմել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին:*



Ինչպես նշված է հաղորդագրությունում, Վրաստանի հետ բարեկամության խմբի համանախագահներ Թեք Պոյի (հանրապետական, Տեխասի նահանգ) եւ Ջերալդ Կոնոլի (դեմոկրատ, Վերջինիայի նահանգ) նախաձեռնած ուղերձը կրկին անգամ ընդգծում է Միացյալ Նահանգների կողմից Վրաստանի երկկուսակցական աջակցությունը:

Ուղերձում կրկին ընդգծված է Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության աջակցությունը: Միաժամանակ, կոնգրեսականները նախագահին կոչ են անում Վրաստանի հետ բանակցություններ սկսել ազատ առեւտրի համաձայնագրի կնքման եւ բարձր մակարդակով առեւտրի ու ներդրումների հարցով երկխոսության իրականացման համար: Կոնգրեսականները նախագահին կոչ են անում նաեւ Վրաստանին պաշտպանել ՆԱՏՕ-ին ինտեգրման հարցում: Նամակում ընդգծված է երկու երկրների միջեւ ռազմավարական սերտ համագործակցությանն ու գործընկերության հզորացման անհրաժեշտությունը: Ուղերձում նշված է նաեւ Վրաստանի ավանդը միջազգային ահաբեկչության եւ գլոբալ անվտանգության համար պայքարում:

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՀԱՂԹԵՑ ՉՃԱՆԱՉՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

*Անցած վեց տարիների ընթացքում Վրաստանը Ռուսաստանին հաղթել է չճանաչման քաղաքականությունում:*

Այդ մասին հայտարարեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին՝ մեկնաբանելով ԱՄՆ ներկայացուցիչների պալատի կոնգրեսականների կողմից ընդունված՝ Վրաստանի բռնազավթված տարածքները ճանաչած երկրներին օգնության մատակարարումն արգելելու մասին օրինագիծը:

Ինչպես նշեց նախագահը, դա վրաց դիվանագիտության հաղթանակն է ու ԱՄՆ-ում Վրաստանի դեսպանության հաջող աշխատանքի արդյունքը:

- Առանձնակի երախտագիտություն եմ հայտնում Արեւմուտքի մեր բարեկամներին: Մեզ ասում են, որ մենք պետք է ընդունենք առկա իրականությունը, սակայն Վրաստանը երբեք չի հաշտվի բռնազավթված տարածքների հետ: Այսօր կամ վաղը մենք կմիավորենք մեր երկիրը,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Նշենք, որ վերոնշյալ օրինանախագծի համաձայն, 100 միլիոն դոլար է հատկացվում Եվրոպայում Ռուսաստանի ազդեցության նվազեցման համար: Միջոցներ են հատկացվում նաեւ «Արեւելյան գործընկերության» անդամ երկրներին Եվրամիության հետ ազատ առեւտրի պայմանագրի կատարման համար, որի նպատակը Ռուսաստանից տնտեսական եւ քաղաքական կախվածության նվազեցումն է:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# C ՀԵՊԱՏԻՏԻ «ՍՈՎԱԼԴԻ» ԴԵՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից Հայաստանի Հանրապետությանը կնվիրաբերվի «Սովալդի» (Sofosbuvir tablets of 400 mg N28) դեղը:*

Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից Հայաստանին կնվիրաբերվի «Սովալդի» դեղ: Այդ մասին որոշման նախագիծը հաստատվեց Հայաստանի կառավարության նիստում:

- Նախագծի նպատակն է սահմանել Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից հեպատիտ C հիվանդությամբ տառապող անձանց բուժման համար նախատեսված «Սովալդի» դեղը Հայաստանի առողջապահության նախարարությանը նվիրաբերելու հարցը,- ասաց Հայաստանի առողջապահության նախարար Լեւոն Ալթունյանը: Այսպիսով, նոր սերնդի դեղամիջոցով ակնկալվում է Հայաստանում հեպատիտ C-ով հիվանդների բուժման արդյունավետության բարձրացում:

- Խոսքը 3000 տուփի մասին է, որը բավարար է 1000 հիվանդ բուժելու համար,- ասաց նախարարը:



ՖՐԱՆՍԻԱ

## ՈՒՄ ԿԸՆՏՐԻ ԵՐԿԻՐԸ. ՄԱԿՐՈՆԻ՞Ն, ԹԵ՞ ԼԸ ՊԵՆԻՆ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Ֆրանսիայում նախագահական ընտրությունների՝ ապրիլի 23-ին կայացած առաջին փուլում, Մակրոնը հավաքել է ձայների 24,01, Լը Պենը՝ 21,3 տոկոսը: Երկրորդ փուլը նշանակված է մայիսի 7-ին:*

*BFMTV հեռուստաալիքի պատվերով, Elabe հետազոտական ինստիտուտի հարցման արդյունքներով, «Հառաջ» շարժման հիմնադիր, հանրապետության էկոնոմիկայի նախկին նախարար Էմանուել Մակրոնին առավելության է հասել «Ազգային ճակատի» առաջնորդ Մարին Լը Պենի նկատմամբ:*

*Ֆրանսիայում նախագահական ընտրությունների երկրորդ փուլից առաջ, նախապատվությունը Մակրոնին է տվել հեռուստադիտողների 63, Լը Պենին՝ 34 տոկոսը: Հարցվածների եւս 3 տոկոսը դժվարացել է նշել հաղթողին: Մակրոնը հաղթանակ է տարել նաեւ Figaro թերթի կայքում անցկացված հարցման արդյունքում՝ ապահովելով ձայների 64 տոկոսը, 36 տոկոսի դիմաց:*

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

## ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի ներկա կազմը դադարեցրել է իր գործունեությունը: Այդ մասին տեղեկացրել է Մեծ Բրիտանիայի վարչապետ Թերեզա Մեյը Ելիզավետա 2-րդ թագուհու հետ հանդիպումից հետո, որի ընթացքում համաձայնեցվել է խորհրդարանի ստորին պալատը ցրելու հարցը՝ կապված հունիսի 8-ի համընդհանուր ընտրությունների հետ:*

*- 2015 թվականին ձեւավորված խորհրդարանն այժմ դադարեցրել է իր գործունեությունը, եւ 36 օր անց երկիրը կընտրի նոր կառավարություն ու վարչապետ,- ասել է Մեյը:*

*Նրա խոսքով, ով էլ հաղթի առաջիկա ընտրություններում, նա կբախվի ԵՄ-ի հետ բանակցությունների արդյունքներով Մեծ Բրիտանիայի համար Brexit-ի լավագույն պայմաններին հասնելու խնդրի հետ:*

ՈՒԿՐԱԻՆԱ

## ԴԱՏՈՒՄ ԵՆ ՎԻԿՏՈՐ ՅԱՆՈՒԿՈՎԻՉԻՆ

*Մայիսի 4-ին, Կիեւի Օբոլոնյան շրջանային դատարանում, սկսվեց Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչի գործով նախնական նիստը: Նիստում որոշվել է մեղադրյալին հնարավորություն ընձեռել մասնակցելու դատավարություններին տեսակապի ռեժիմով:*

*Ուկրաինայի իշխանությունները Յանուկովիչին մեղադրում են պետական դավաճանության մեջ: Այս հոդվածով նվազագույն պատիժը կազմում է տասը տարվա ազատազրկում, սակայն, ինչպես ճեպազրույցում հայտարարել է դատախազ Վիկտոր Կրավչենկոն, մեղադրող կողմը մտադիր է ամբաստանյալի համար պահանջել ցմահ բանտարկություն:*

*Նախկին նախագահին դատում են հեռակա. 2014 թվականին նա փախել է Ռուսաստան, որտեղ նրան ժամանակավոր ապաստան են տրամադրել:*

*Տեսակապի միջոցով նիստին Յանուկովիչի մասնակցության մասին միջնորդել է պաշտպանող կողմը: Դատավոր Վլադիսլավ Դեւյատկոն բավարարել է նախկին նախագահի փաստաբանի խնդրանքը: Դատական լսումներին ընդմիջում է հայտարարվել մինչեւ մայիսի 18-ը:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

## ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԻ՞

*Այլ երկրի քաղաքացիություն ստանալու դեպքում, բացառված չէ, որ անձը ավտոմատ կերպով չի կորցնի Վրաստանի քաղաքացիությունը:*



Անկախ պատգամավոր Սալոմե Զուրաբիշվիլու սույն նախաձեռնությունը ներառված է սահմանադրական փոփոխություններում: Նախագիծն արդեն չունի սահմանափակումներ այն մասին, որ Վրաստանի քաղաքացիները չեն կարող միեւնույն ժամանակ լինել այլ երկրի քաղաքացի:

Ինչպես հայտարարեց խորհրդարանի իրավաբանական կոմիտեի փոխնախագահ Դավիթ Մատիկաշվիլին, օրենքով կսահմանվեն այն ընթացակարգերը, որոնք անհրաժեշտ են կարգավիճակի պահպանման համար:

- Նոր սահմանադրությունում սահմանվում է հետեւյալը. եթե Վրաստանի քաղաքացին ստանում է օտար երկրի քաղաքացիություն, ապա դա ավտոմատ կերպով չի հանգեցնի Վրաստանի քաղաքացիության չեղարկմանը: Գրանցված է, որ մյուս կարգավորումները սահմանում է օրենքը: Արդեն օրենքով կորոշվեն այն ընթացակարգերը, որոնք անհրաժեշտ են այդ ստատուսի պահպանման համար: Ստատուսքվոն կլինի սկզբունքայնորեն նշանակալի եւ առաջիկայում կընդունվեն կարգավորումներ, որոնք կներդրվեն այդ համակարգում,- հայտարարեց Դավիթ Մատիկաշվիլին:

***Մայիսի 5-ից սկսած՝ սահմանադրական նախագծի համաժողովրդական քննարկմանը այս փոփոխությունը երեւի կլինի առանձնակի ուշադրության կենտրոնում, քանի որ այն բավական հրատապ է հազարավոր քաղաքացիների համար:***

***ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՆ ԷՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ների ինտեգրման հարցերով պետնախարար Վիկտոր Դոլիձեն ու Յոհաննես Հանը ստորագրեցին «Տեխնիկական համագործակցության մեխանիզմ» ֆինանսական համաձայնագիրը, որի հիման վրա, Ասոցիացման համաձայնագրի իրականացման աջակցության համար, Եվրամիությունը Վրաստանին տրամադրում է 32 միլիոն եվրոյի օգնություն: Համաձայնագիրն ուղղված է պետական գերատեսչությունների ինստիտուցիոնալ ուժեղացմանն ու եվրոպական չափորոշիչներին երկրի մերձեցմանը:

## ԱՃՈՒՄ Է ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ

Եվրամիության հետ անայցեգրային պայմանակարգի կիրառկման առաջին ամսվա ընթացքում, դրանից օգտվել է Վրաստանի 11700 քաղաքացի, եւ միայն 26-ն է վերադարձվել: Այդ մասին հայտարարեց եվրաինտեգրման հարցերով խորհրդարանական կոմիտեի նախագահ Թամար Խուլորդավան:

- Ապրիլի 27-ի տվյալներով, 26 երկիր ներառող Շենգենյան գոտու սահմանը հատել է Վրաստանի 11700 քաղաքացի, վերադարձվել է ընդամենը 26 քաղաքացի, եւ դա կապված է օբյեկտիվ հանգամանքների հետ,- հայտարարեց նա:

ԲԱՆԱԿ

## ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

*Վրաստանի պաշտպանության նախարարությունը հայտարարել է քառամյա ժամկետով երկրի զինված ուժեր պայմանագրային զինծառայողների ընդունելության մասին:*

Պայմանագրային զինծառայող կարող են դառնալ Վրաստանի այն քաղաքացիները, ովքեր չեն անցել պարտադիր զինծառայություն, գրանցված են պարտադիր զինռեեստրում, եւ ում 27 տարին դեռեւս չի լրացել: Պայմանագրային զինծառայող կարող են դառնալ ինչպես շարքայինները, այնպես էլ՝ կապրալները, սերժանտները (միչմանները), ովքեր գրանցված են պահեստայինում, եւ ում տարիքը 35-ը չի գերազանցում: Պայմանագրային զինծառայող դառնալ ցանկացողները, անհրաժեշտ փաստաթղթերի հանձնումից հետո, անցնելու են տասշաբաթյա նախնական զինծառայություն, որը կմեկնարկի հունիսի 5-ին: Չորս տարվա ընթացքում, պայմանագրային զինծառայողները կստանան նյութական բարձր վարձատրություն, որը կավելանա՝ կախված կոչումից, զբաղեցրած պաշտոնից եւ ծառայության ստաժից:

Պայմանագրային ծառայություն անցնող զինծառայողները կապահովվեն ժամանակակից հանդերձավորմամբ ու անվճար բժշկական սպասարկումով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ՄԻՋԻՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ 284 ԼԱՐԻ Է

***Ինչպես տեղեկացրել է Վրաստանի վիճակագրության ծառայությունը, ընթացիկ տարվա մարտի տվյալներով, կենսական նվազագույնը Վրաստանում կազմում է 284,7 լարի:***

Աշխատունակ տղամարդու կենսական նվազագույնը, ըստ վիճակագրության, կազմում է 169,7, իսկ միջին սպառողինը՝ 150,3 լարի:

Նշենք, որ, անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի տվյալներով, աշխատունակ տղամարդու կենսական նվազագույնը կազմում էր 161,6, իսկ միջին սպառողինը՝ 143,2 լարի:

Երկու անդամից կազմված ընտանիքի կենսական նվազագույնը ընթացիկ տարվա հունվարին կազմում էր 240,5, երեք անդամից կազմված ընտանիքինը՝ 270,6, չորս անդամից կազմված ընտանիքինը՝ 300,7, հինգ անդամից բաղկացած ընտանիքինը՝ 383,3 եւ վեց անդամներով ընտանիքինը՝ 399,9 լարի:

Նշենք, որ կենսական նվազագույնի հաշվառմանը նկատի է առնվում միայն պարենային զամբյուղը, եւ հաշվի չեն առնվում մյուս ծախսերը, որոնք կապված են կոմունալ սպասարկումների, տրանսպորտային եւ այլ ծախսերի հետ:

ԴԻՄԱԿԱՅՈՒՄ

## ՌՈՒՍԱՍՏԱՆՆ ՈՒԺԵՂԱՑՆՈՒՄ Է ՍԵՎԾՈՎՅԱՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ

Վրաստանում լույս տեսնող «Արսենալ» ամսագրի գլխավոր խմբագիր Իրակլի Ալադաշվիլին թերահավատորեն է վերաբերվում Սեւ ծովում ՆԱՏՕ-ի ռազմական ուժերի հզորացմանը՝ նշելով, որ այդ հարցը դեռեւս գտնվում էր վարշավյան գագաթաժողովի օրակարգում, թեպետ դրա մասնակիցները միասնական որոշման չհանգեցին: Փոխարենը, Ռուսաստանը շարունակում է գործուն միջոցների իրականացումը սեւծովյան նավատորմի ուժեղացման ուղղությամբ: Մասնավորապես, ինչպես նշեց Իրակլի Ալադաշվիլին, մոտ ժամանակներում Ռուսաստանը Սեւ ծովում կունենա վեց ստորջրյա նավ, որոնք ի վիճակի կլինեն ունենալ թեւավոր հրթիռներ: Իրակլի Ալադաշվիլու հավաստմամբ, Ռուսաստանը միջոցներ է ձեռնարկում նաեւ վերջրյա նավատորմի ուժեղացման ուղղությամբ:

- ՆԱՏՕ-ին կողմնորոշվելը բխում է Վրաստանի շահերից, այն շահագրգռված է Սեւ ծովում ալյանսի ուժեղացմամբ, թեպետ այս մասին միայն խոսակցություններ են տարվում, այն դեպքում, երբ Ռուսաստանը այդ ուղղությամբ կոնկրետ գործողություններ է իրականացնում,- հայտարարեց Իրակլի Ալադաշվիլին:

## ՎՐԱՍՏԱՆԸ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏՆԵՐԸ ԿԱՐՈՂ Է ԶԻՋԵԼ ՆԱՏՕ-Ի ԾՈՎԱՅԻՆ ՈՒԺԵՐԻՆ

Բրյուսելում, ՆԱՏՕ-ի առաջիկա 29-րդ գագաթաժողովում, այլ հարցերի հետ միասին, քննարկվելու է նաեւ Սեւ ծովի ավազանի անվտանգության հարցը:

Նշենք, որ ժամանակին ալյանսի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը հայտարարել էր, որ իրենք գործուն քայլեր են իրականացնում Սեւ ծովի անվտանգության եւ տարածաշրջանում ՆԱՏՕ-ի ներկայացուցչության ուժեղացման ուղղությամբ, նա չկոնկրետացրեց, թե այդ գործում ինչ դեր է վերապահվում Վրաստանին: Փորձագետների կանխագծումներով, սեւծովյան ավազանի անվտանգության հարցում Վրաստանի մասնակցությունը կարող է իրականացվել երկու տարբերակով՝ ՆԱՏՕ-ի անդամ սեւծովյան երկրների հետ համատեղ զորավարժությունների անցկացման կամ սեւծովյան նավահանգիստները ՆԱՏՕ-ի ռազմածովային ուժերին տրամադրման ուղղությամբ:



### ՀՈՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է ՄԻՆՉԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը

*Հողերի գրանցման պետական բարեփոխման ժամկետը երկարաձգվել է մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը:*

*Վրաստանի արդարադատության նախարարի նախաձեռնությամբ, բարեփոխումը մեկնարկեց 2016 թվականի օգոստոսի 1-ին: Բարեփոխման նպատակը հողամասերի գրանցման հետ կապված բոլոր հիմնախնդիրները կարգավորելն ու դրա համար գրանցման ընթացակարգը դյուրացնելն է:*

*Շահագրգռված անձինք մանրամասն տեղեկատվություն կարող են ստանալ թեժ գծի հեռախոսահամարով՝ 2 405 405:*

### ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ԵՂԱՎ ԹԵԹՐԻԾՂԱՐՈՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

*Ինչպես հայտարարեցին Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի վարչության հասարակության հետ հարաբերությունների ծառայությունում, վարչության նախագահ Բեսիկ Ծիկլաուրին ապրիլի 28-ին պաշտոնաթողության դիմում էր ներկայացրել մունիցիպալիտետի սակրեբուլոյին: Անձնական դիմումի պատճառը, ինչպես նշեցին ծառայությունում, պետական այլ կառույցում աշխատանքի անցնելն էր:*

### ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ՝ ԲՈԼՈՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

*Մոտ ժամանակներում, Վրաստանի բոլոր շրջկենտրոններում, կկառուցվեն մարզահամալիրներ: Այդ մասին երկրի խորհրդարանում հայտարարեց տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Զուրաբ Ալավիձեն:*

*Զանգվածային սպորտի զարգացման ծրագիրը Վրաստանի կառավարության 2016-2020 թվականների գործողության ծրագրի առաջնահերթություններից մեկն է եւ նախատեսում է երիտասարդության ակտիվ ներգրավումը մարզական միջոցառումներին ու առողջ կենսաձեւի սկզբունքների ներդրմանը:*

*- Մենք ծրագրում ենք մոտ ժամանակներում մունիցիպալային բոլոր կենտրոններում կառուցել մարզահամալիրներ: Մենք մշակում ենք ծրագիր, որը պատրաստ կլինի առաջիկա 2-3 ամսվա ընթացքում եւ ձեռնամուխ կլինենք դրա իրականացմանը,- հայտարարեց Զուրաբ Ալավիձեն:*

*Վրաստանի կառավարությունը մտադիր է առանձնակի ուշադրություն նվիրել Վրաստանում սպորտի զարգացմանը, այն հաշվով, որպեսզի երիտասարդների 25 տոկոսը ներգրավված լինի զանգվածային սպորտում, իսկ 15 տոկոսը՝ պրոֆեսիոնալ սպորտում: Առանձնակի ուշադրություն կհատկացվի ֆուտբոլի եւ ռեգբիի զարգացմանը: Նաեւ կառավարությունը մտադիր է զարգացնել մարզական զբոսաշրջությունը:*

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

**(5 մայիսի)**

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.405 | 2.485 |
| ԵՎՐՈ | 2.587 | 2.785 |
| ՌՈՒԲԼԻ | 0.039 | 0.046 |
| ԴՐԱՄ | 0.0038 | 0.0055 |

*Ապրիլի 28-ի համեմատությամբ, դոլարի կուրսը աճել է 0.01 լարիով:*

ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

# ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԽՆԴԻՐՆ Է, ՈՐ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ԼԻՆԵՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ»

*- Մեր խնդիրն է, որ անկախ ազգային պատկանելությունից, մեր բոլոր համաքաղաքացիները մեր ընդհանուր հայրենիքում լինեն իրավահավասար եւ ունենան հնարավորություն ներգրավվել իրենց ցանկալի ուղղություններով,- հայտարարեց Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին` դիմելով ստաժավորման պիլոտային ծրագրի մրցույթի հաղթողներին:*



Ծրագրի շրջանակներում, ընտրված 65 երիտասարդները եռամսյա ստաժավորում կանցնեն հանրային 20 հաստատություններում (այդ թվում` տեղական ինքնակառավարման մարմիններում եւ հանրային իրավունքի իրավաբանական անձանց մոտ): Պետնախարարը մրցույթի հաղթողների հետ հանդիպմանը խոսեց պիլոտային ծրագրի նշանակության եւ քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ պետական մոտեցումների մասին:

- Ցանկանում եմ շնորհավորել եւ հաջողություններ մաղթել: Մեր նպատակն է նպաստել ձեր զբաղվածությանն ու առավելագույն ներգրավմանը տարբեր ոլորտների հասարակական կյանքում: Ուստի, Վրաստանում ՄԱԿ-ի ասոցիացիայի հետ սերտ համագործակցությամբ մենք մշակել ենք ստաժավորման պիլոտային ծրագիր` անմիջականորեն «1+4» հանրակրթական ծրագրի մասնակիցների համար,- հայտարարեց պետնախարարը:

Քեթեւան Ցիխելաշվիլին նշեց նաեւ, որ, ստաժավորման ավարտից հետո, պետական նախարարի աշխատակազմը Վրաստանում ՄԱԿ-ի ասոցիացիայի աջակցությամբ, առաջիկա ստաժավորման ծրագրի կատարելագործման նպատակով, կգնահատի դրա արդյունավետությունը: Նա հույս հայտնեց, որ յուրաքանչյուր ստաժյոր առավելագույնս կցուցաբերի իր ունակությունները, կուսումնասիրի հանրային ծառայության յուրահատկությունը եւ հաջողությամբ իրեն կդրսեւորի հանձնարարված պարտականությունների կատարման գործում:

Պետնախարարը ապլիկանտներին շնորհակալություն հայտնեց շահագրգռվածության համար, ովքեր անցել են մրցույթի եզրափակիչ փուլը, եւ նշեց, որ նրանց կտրվի ստաժավորումն անցնելու հնարավորություն: Քեթեւան Ցիխելաշվիլին սերտ համագործակցության եւ աջակցության համար շնորհակալություն հայտնեց Վրաստանում ՄԱԿ-ի ասոցիացիային եւ ԱՄՆ-ի զարգացման գործակալությանը:

- Սույն ծրագիրը հիանալի հնարավորություն է եւ ազգային փոքրամասնությունը ներկայացնող երիտասարդների ապագա զբաղվածության համար հեռանկարային: Ուրախ կլինենք, եթե մեր ավանդը ներդնենք քաղաքացիական ինտեգրման գործում: Միաժամանակ, դա նշանակալի շարժառիթ է մյուս ուսանողների համար,- հայտարարեց Լուսինե Փիչիկյանը, ով ստաժավորումն անցավ հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի աշխատակազմում:

Ստաժավորման պիլոտային ծրագրին մասնակցելու համար, գրանցվել էր ընդամենը 151 ուսանող: Նրանցից հարցազրույցի փուլ անցավ 90-ը: Հարցազրույցը հաջողությամբ անցավ 65 ապլիկանտ:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԿՇՆՈՐՀՎԻ ԴԱՍԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

***2017 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտնում կառավարության «Պետական աշխատողներին պաշտոնյայի դասերի շնորհման կարգի մասին» որոշումը: Փաստաթղթի համաձայն, պետական կառույցներում աշխատողներին կտրվեն առաջինից մինչեւ 12-րդ դասի կարգավիճակ, ընդ որում` այդ դասերով էլ նրանք կստանան համապատասխան հավելավճար:***



Պաշտոնյաները բաժանվում են հետեւյալ դասերի` հանրային ծառայության երրորդ դասի ռեֆերենտ, հանրային ծառայության երկրորդ դասի ռեֆերենտ, հանրային ծառայության առաջին դասի ռեֆերենտ, հանրային ծառայության երրորդ դասի խորհրդական, հանրային ծառայության երկրորդ դասի խորհրդական, հանրային ծառայության առաջին դասի խորհրդական, երրորդ դասի խորհրդական, երկրորդ դասի խորհրդական, առաջին դասի խորհրդական, պետական խորհրդական, առաջին դասի պետական խորհրդական, պետական գործող խորհրդական:

Պաշտոնյաների դասերը սահմանում են նրանց մասնագիտական գիտելիքներն ու փորձը: Պետական աշխատողներին դասի շնորհումը հետապնդում է շարժառիթի բարձրացման, նյութական բարօրության աջակցության եւ պետական ծառայության կայունացման ապահովման նպատակ:

Պետական պաշտոնյաներին դասերը շնորհվում են նրանց գնահատման արդյունքներով:

Առաջինից մինչեւ վեցերորդ դասը ներառյալ` լավագույն գնահատականով` երկու տարին մեկ անգամ, առնվազն դրական գնահատականով` երեք տարին մեկ անգամ:

7-րդից մինչեւ 12-րդ դասը ներառյալ, լավագույն գնահատականով` տարին մեկ անգամ եւ առնվազն լավ գնահատականով` տարին երկու անգամ:

Դաս չի շնորհվի այն պաշտոնյային, որը նշանակված է փորձնական ժամկետով մինչեւ ժամկետի սպառումը: Վերոնշյալ որոշմամբ, նախատեսված է տվյալ պաշտոնյային «Ըստ դասի հավելավճարի» հանձնում: Թեպետ հավելավճարի կոնկրետ չափը չի նշվում ո'չ որոշման մեջ եւ ո'չ էլ «Հանրային ծառայությունում վարձատրության մասին» օրենքում:

2017 թվականի բյուջեով Վրաստանում աշխատում է 115 հազար պետական պաշտոնյա: Դեռեւս հայտնի չէ, թե նրանցից ում կշնորհվի պետական պաշտոնյայի դաս, հայտնի չէ նաեւ հավելավճարի չափը:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ԱՎՏՈՄԱՅՐՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԽՍՏԱՑՎՈՒՄ Է ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի ավտոմայրուղիների վրա, մայիս ամսվա մեջ, կտեղադրվի մոտ 90 տեսախցիկ: Այս մասին հայտարարեց Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար Զուրաբ Ալավիձեն հանդիպման ժամանակ, որտեղ նա ներկայացրեց նախարարության գործունեության հաշվետվությունը եւ խոսեց գործողությունների պլանի մասին:



Ըստ Ալավիձեի, տեսախցիկները արձանագրելու են միջին արագությունը տեսախցիկից տեսախցիկ:

- Չի լինելու այնպես, որ, տեսախցիկը տեսնելով, մեքենան նվազեցնի արագությունը, իսկ անցնելով այն` արագությունը կրկին աճի: Մենք պետք է խստացնենք վարչարարությունը, եւ ով արժանի է պատժի, նա կտուգանվի: Ինչքան շատ պարեկային ոստիկանություն էլ կանգնած լինի ճանապարհների վրա, կապ չունի, բոլոր վարորդները «թռչում են», եւ դա խնդիրներ է առաջացնում,- ասաց Ալավիձեն:

Զուրաբ Ալավիձեն հավելեց, որ շուրջ 1000 տեսախցիկ կտեղադրվի ինչպես ավտոճանապարհներին, այնպես էլ` քաղաքապետարանային ճանապարհների վրա, բոլոր ուղղություններով:

- Անվտանգությունը թիվ մեկ խնդիրն է: Մենք փորձում ենք, որքան հնարավոր է շուտ տեղադրել տեսախցիկները եւ միացնել ցանցին: ՆԳՆ-ն նույնպես պատրաստ է դրան,- հայտարարեց Ալավիձեն:

# ԽԱԽՏՈՒՄ ԹՈՒՅԼ ՉՏՎԱԾ ՎԱՐՈՐԴՆԵՐԸ ԿԽՐԱԽՈՒՍՎԵՆ

Վարորդները, ովքեր մեկ տարվա ընթացքում ճանապարհային երթեւեկության կանոնները չեն խախտի եւ կպահպանեն 100 միավորը, պետության կողմից կխրախուսվեն: Այդ մասին հայտարարեց խորհրդարանական մեծամասնության ղեկավար Արչիլ Թալակվաձեն: Նրա խոսքով, խրախուսման ձեւերից մեկը կարող է լինել ավտոմեքենայի կամ կյանքի արտոնյալ պայմաններում ապահովագրությունը: Քննարկվում են նաեւ խրախուսման մյուս տեսակները:

Հիշեցնենք, որ ճանապարհային երթեւեկության խախտման նոր պատժամիջոցները ուժի մեջ են մտնում ընթացիկ տարվա հուլիսի 1-ից:

# ՊԱՐԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ ՈՉ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՁԵՎԱՉԱՓՈՎ

«Ճանապարհային անվտանգության մասին» օրենքում կատարած փոփոխության համաձայն, որն ուժի մեջ կմտնի ընթացիկ տարվա հուլիսի 1-ից, ոչ կոնտակտային պարեկները կերթեւեկեն քաղաքացիական ավտոմեքենաներով:

Ինչպես հայտարարեց խորհրդարանական մեծամասնության ղեկավար Արչիլ Թալակվաձեն, պարեկության մեքենաները կարող են լինել տարբեր տեսակի ու գույնի, բացառված չէ, որ առանձին պարեկներ փողոցներում երթեւեկեն տաքսիներով եւ միկրոավտոբուսներով:

Հիշեցնենք, որ «Ճանապարհային անվտանգության մասին» օրենքում իրականացված փոփոխությունները հաստատվել են խորհրդարանի կողմից: Այդ փոփոխություններով նորամուծություններից մեկը ոչ կոնտակտային պարեկությունն է, որը գործնական կիրառություն կունենա հուլիսի 1-ից: Եվս մեկ նորամուծությունը վարորդական իրավունքի համակարգում 100 միավորի ներդրումն է:

# ՆԵՐԴՐՎՈՒՄ Է ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄ

***Ավտոմեքենաների տեխնիկական ստուգման վերականգնման առաջին փուլում վարորդները պետք է բավարարեն բազային գործոններից մի քանիսը:***



Ինչպես տեղեկացրել է խորհրդարանական մեծամասնության ղեկավար եւ ճանապարհային անվտագության մասին օրինանախագծի հեղինակներից Արչիլ Թալակվաձեն, դրանք նվազագույն գործոններն են, որոնք անհրաժեշտ են, որպեսզի վարորդների, ուղեւորների ու հետիոտնների կյանքին վտանգ չսպառնա:

- Մենք պարտավորություն ենք ստանձնել Եվրամիության առջեւ տեխնիկական կարգավորման ներդրման հարցում: Բնականաբար, Եվրոպայում ստուգվում է ավելի քան 100 տեխնիկական գործոն, թեպետ մենք ներկայումս պատրաստ չենք այդ գործոնները լրիվությամբ ներդնել, քանի որ արդյունքում մեքենաների մեծ մասը մեզանում կանգ կառնի: Հետեւաբար, առաջին փուլում մենք մտադիր ենք վերահսկել միայն բազային գործոններից մի քանիսը: Օրինակ` բամպերը, արգելակման համակարգը, ավտոդողերի վիճակը, անվտանգության ամրագոտին, լույսերը, գազերի արտաթորումը: Կարծում եմ` նվազագույն այս վեց գործոնները պետք է հաշվի առնեն բոլոր ավտոմեքենաների վարորդները, քանի որ դա անմիջականորեն առնչվում է իրենց, ուղեւորների եւ հետիոտնների անվտանգության հետ,- հայտարարեց Արչիլ Թալակվաձեն: